II

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

XIX դ. հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական, մշակութային գործիչների մեջ ուրույն տեղ ունի Մկրտիչ Խրիմյանը. ինքնուս վարժապետ դարձած, 1854 թ. վարդապետ օծված, Վարագա և Սբ. Կարապետի վանքերի վանահայր, Կ. Պոլսի հայոց պատրիարք, Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակության ղեկավար, Վասպուրականի և Տարոնի հոգևոր առաջնորդ, Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կրոնական ժողովի ատենապետ, Երուսաղեմի աքսորական, ապա՝ Ամենայն հայոց կաթողիկոս: Իր գործունեությամբ նա իրար շաղկապեց Արևմտյան Հայաստանի ամենահայաշատ վայրերը՝ Տարոնն ու Վասպուրականը, ապա՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանը: Գործունեության վաղ արշալույսին, 1850 թ., նա մեկնեց քրիստոնեական սրբազան վայրերը. «Յիս զորացավ այն սուրբ ցանկութիւն, տեսանել զԵրուսաղեմ, զաշխարհ Փրկչին մերոյ, յորում լոյսն ազավ, Բանն մարմին եղեւ հրաշապես և բնակեցավ ընդ մարդիկ»[1]: Աշխարհական Մկրտչի ջերմ ցանկությունն էր «Աչոք իսկ տեսանել անդ զակունս աղբերաց եւ զգետոց կենդանարար ջուրց, որ բխեցին Երուսաղեմ, և ընթացեալ արբուցին զհեթանոսական անապատն»[2]: Այնտեղ՝ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց մեծահռչակ վանքում օթևանած երիտասարդ Մկրտիչը, արբեցած սուրբ վայրերի առատությունից, գեղեցկությունից, ցանկացավ հագուրդ տալ կրթության իր անհագ ծարավին, ինչին ձգտում և երազում էր նրա օժտված հոգին: Մեծ էր նրա հուսախաբությունը, երբ զգաց, որ այդ հռչակավոր վանքի միաբանությունը չունի մտավոր այն բարձր մակարդակը, որին ծարավի էր ինքը: Բայց սուրբ վայրերի շոշափելի մերձությունը նրա մեջ արթնացրին գրելու նիրհած բնածին ձիրքը: Մենաստանի խաղաղ առանձնության մեջ նրան հատկացվել էր մի փոքրիկ սենյակ. «…զի վիճակվեցավ ինձ՝ փոքրկանս մի փոքրիկ սենեակ, շինեալ առանձին ի վերայ տանեաց և հայէր դուռն ընդ արևելս ’ի լեառն Զիթենեաց: Նախագուշա՞կ արդեոք սենեակն այն, թե տիրացու Մկրտիչն՝ վարդապետ լինելոց է»[3]: Այդ սենյակում նա սկսեց գրել «Հրաւիրակ երկրին Աւետեաց» պոեմը: Քառասուն տարի անց, կրկին լինելով Երուսաղեմում, նա հիշում է, թե ինչպես է գրել և միաժամանակ՝ երգել: Այն ժամանակվա Տեր Հովհաննես մեծագործ պատրիարքը, լսելով նրա երգը, մոտենում է և հարցնում, թե ի՞նչ է երգում: Խրիմյանը պատասխանում է, որ գրում և երգում է Հրաւիրակը Աւետեաց երկրին, հրավիրում է «զմանկունս և զժողովուրդս հայոց»,

---

[1] *Մ. Խ ր ի մ ե ա ն. Ամբողջական երկեր, Նիւ Եորք, 1929, էջ 520:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 521:*

որ ուխտի գան Երուսաղեմ: Կ. Պոլիս վերադառնալով՝ 1851-ին, նա լույս ընծայեց իր երկրորդ ստեղծագործությունը՝ «Հրաւիրակ երկրին Աւետեաց» պոեմը: Ինչպես առաջին «Հրաւիրակը», այս երկրորդը ևս իր վրա մեծ չափով կրում է Մխիթարյան հայրերից Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազնի» ազդեցությունը, գրված է հին հայկական տաղաչափությամբ: Ուժգին հայրենասիրության հետ մեկտեղ այս քերթվածն աչքի է ընկնում սուրբ գրքերի արտակարգ իմացությամբ, կրոնական ջերմ զգացումով և հոգևոր ներշնչանքով: Կարդալու ընթացքում ընթերցողն անընդհատ զարմանում է, թե հեղինակը՝ 30-ամյա աշխարհիկ անձնավորությունը, ինչպես է ստեղծել քրիստոնեական վարդապետությանը նվիրված այդպիսի մի կոթող: Պոեմն ընթերցելուց հետո պարզ է դառնում, որ միանգամայն օրինաչափ և բանական էր այրիացյալ Խրիմյանի կյանքի հետագա ընթացքը: Եվ պատահական չէ, որ հետագայի հոգևորական պատմաբանները Խրիմյանի գրական ստեղծագործությունների մեջ ամենաբարձրը գնահատել են երկու հրավիրակները:

«Հրաւիրակ երկրին Աւետեացը» բաղկացած է յոթ երգից: Ամեն մի երգն ունի «նախացոյց պատկեր իմաստից» վերտառությամբ համառոտ բացատրություն, թե ինչ է նկարագրված այդ երգում: Առաջին երգը նվիրված է սուրբ Նազարեթ քաղաքի անարատ կույսի հղությանը և Հիսուսի անմեղ մանկությանը: Ապա ընթերցողը ծանոթանում է Բեթլեհեմին, Հորդանան գետին, և «բանք նորին կշտամբողական առ ազգն Հրեից»: Նկարագրում է Հիսուսի մկրտությունը և հորդոր է կարդում բոլոր մանուկներին՝ «անարատ պահելու զընկալեալ շնորհս մկրտութեան»: Երկրորդ երգում խրատում է մանուկներին (պետք է հասկանալ ընթերցողներին)՝ «չերկրպագել փառաց ախտին», իր խոսքով ընթերցողներին ուղեկցում է Տիբերական ծովի եզերքը, ապա բարձրացնում Թաբորական լեռը, նկարագրում Քրիստոսի պայծառակերպությունը, վերջում հորդորում է մանուկներին՝ հետևել Քրիստոսի «խաչակիր առաքինութեան»: Այդպես մանրամասն իր բոլոր երգերով, հայկական հին տաղաչափությամբ, շքեղ գրաբարով հայությանն է հանձնում Նոր կտակարանի բոլոր դրվագները: Այդ յոթ երգի մեջ դրսևորվում է Խրիմյանի քաջիմացությունը հայ մատենագրության, մինչև իր օրերի հեղինակներն ու գիտնականները: Ցավոք, հեղինակը ծանոթ չէր եվրոպական գրականության նմանատիպ ստեղծագործություններին, տեղյակ էր միայն այն սակավաթիվներին, որոնք իր ժամանակ թարգմանված էին հայերեն: Պոեմի վերջում հեղինակը համառոտ ծանոթություններ է տալիս «Հրավիրակում» հիշատակված սուրբ վայրերի մասին, ինչպես՝ Նազարեթ, Բեթլեհեմ, Հորդանան գետ, «լեառն փորձութեան», Տիբերական ծով, Թաբորական լեառն, Սիոն վերնատուն, Գեթսեմանի ձոր և ներկայացնում բազմաթիվ այդպիսի վայրերի և՛ տեղադրությունը, և՛ նկարագրությունը, և՛ բացատրությունը: Դրանք լայնացնում են ընթերցողի մտահորիզոնը և ցանկություն առաջացնում լինելու այդ սուրբ վայրերում. այսինքն՝ հեղինակը հասել էր իր նպատակին, հրավիրակը կատարել էր իր գործը:

Խրիմյանի կապը Երուսաղեմի հետ շարունակվեց նաև հետագայում: Տարիներ անց՝ 1869-ին, նա ընտրվեց հայոց պատրիարք: Օսմանյան մայրաքաղաքում գտնվող պատրիարքարանը գերակա դիրք ուներ կայսրության կազմի մեջ մտնող հայկական հոգևոր հաստատությունների՝ ինչպես Կիլիկիո և Աղթամարի կաթո-

դիկոսությունների, այնպես էլ Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ, որովհետև նրանք բոլորն էլ ընտրվում և հաստատվում էին Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի ու վարչության կողմից՝ ունենալով պատրիարքի հավանությունը: 1869–1873 թթ. Կ. Պոլսի պատրիարք Մկրտիչ Խրիմյանը բարեկամական ջերմ հարաբերություններ է հաստատում Երուսաղեմի հայոց պատրիարք Եսայու հետ, և քանի որ վերջինս տարիքով իրենից մեծ էր, հաշվի չառնելով իր դիրքը, իրեն համարում էր Եսայու կրտսեր եղբայրը: Նրանք նամակներով խորհրդակցում էին իրար հետ, և Խրիմյանի խորհուրդները հաճախ շոշափում էին համազգային շահեր: Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվում է Խրիմյանի ֆոնդը, որտեղ կան նրա ձեռքով գրված բազմաթիվ նամակներ, այդ թվում նաև՝ ուղղված Եսայի պատրիարքին: Ուշադրություն է գրավում 1872 թ. մայիսի 4-ին թվագրված նամակը՝ ուղղված Երուսաղեմի պատրիարքին, ուր վերջինս զգուշացվում էր «հայոց նվիրական իրավունքները» աչքաթող չանելու համար, քանի որ քրիստոնյա քույր եկեղեցիների պետերը (իտալացիներ, գաղիացիներ, իսպանացիներ) ոտնձգություններ էին կատարում հայերին պատկանող սուրբ վայրերի նկատմամբ: Թուրքական կառավարությունը, համեմատելով հայերի և եվրոպական մյուս ազգերի ունեցած կշիռն ու հեղինակությունը, համարյա միշտ պաշտպանում էր քրիստոնյա հզոր պետությունների հոգևորականների շահերը: Այդ պատճառով տուժում էր հայոց եկեղեցին: Խրիմյանի սթափ հայացքը նկատում էր այդ բոլորը և կանխատեսում դրանից բխող բացասական հետևանքները. «Երուսաղեմի խնդիրը այնպես մի ըմբռնեք, թե սոսկ Երուսաղեմի պատրիարքին կամ հոն տեղի քանի մը հայ բնակչաց կը վերաբերի, այլ ընդհանուր ազգին, որով էջմիածնա կաթողիկոսին և ինձ իսկ գլխովին»[4]: Կ. Պոլսի պատրիարքը լավ գիտեր, որ հայերը Երուսաղեմում հաստատվել են մեծ զոհերի գնով: Նա չէր խաբվում օսմանյան պետության «Հատտը Հումայունի» և «Հատտը Շերիֆի» 1839 և 1856 թթ. հայտարարած բարենորոգումների ծրագրով: «Իբրև թե ազատ դարու մեջ կապրինք, կրոն, եկեղեցին ազատ է, իրավանց բռնություն չիկա, բայց հայերուն զոհ դեռ պետք է շարունակվի»,– գրում էր Խրիմյանը Երուսաղեմի պատրիարքին՝ խորհուրդ տալով գործել մեծ զգուշությամբ և դիվանագիտությամբ, Սբ. Հարության և Սբ. Ծննդյան տաճարները հայոց իրավասությունից դուրս չթողնելու, Բ. Դռան և «անողոքելի ոսոխաց» վրեժխնդրությունից զերծ պահելու համար: Նա լավ գիտեր, որ Ազգային ժողովն ու վարչությունը իրական և իրավական ուժեր չեն, որոնց վրա հենվելով հնարավոր լիներ լուծել ազգային խնդիրները. «Խորհուրդ կուտամ անկեղծ մտերմաբար, չվստահել այնչափ Ազգային վարչության ուժին վրա. այդ երևակայական ուժը Բ. Դռան քով կապվելով չի կարե այնչափ խլրտիլ, զի ամուր շղթաներ զինքն պարավանդած են»[5]: Նա համոզված էր, որ այդ մարտը շահելու համար անհրաժեշտ է խոհեմություն և դիվանագիտություն:

---

[4] *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Խրիմյանի ֆ., գ. 141, էջ 25:*

[5] *Նույն տեղում, էջ 26:*

Դրանով չի ավարտվում Կ. Պոլսի պատրիարք Խրիմյանի կապը Երուսաղեմի պատրիարքի հետ: 1873 թ. հուլիսի 14-ին Խրիմյանը նամակ է ուղղում պատրիարք Եսայուն, որի մեջ շոշափված հարցերը վերաբերում են ոչ թե կրոնական խնդիրների, այլ՝ տնտեսական: Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքն արքունի ճարտարապետից նվեր էր ստացել մի ագարակ, որը նրան արժեցել էր 30-40.000 լիրա: Սակայն վանքի միաբանությունն աչքաթող էր արել ագարակի մշակությունը, և դրանից ստացվում էին չնչին եկամուտներ: Անգամ հեռվից Խրիմյանը քաջատեղյակ էր Երուսաղեմի պատրիարքության տնտեսական կարիքներին և իր խորհուրդներով ուղի էր նշում գործերը կարգավորելու համար: Նա զգուշացնում էր, որ ուխտավորների նվիրատվությունները հետզհետե պակասում են, հետևաբար անհրաժեշտ է ունեցածը պահպանել և մշակել այնպես, որ դրանցից ստացվող եկամուտները հետզհետե ավելանան, և վանքը տնտեսապես բարգավաճի: Խրիմյանը մատնանշում է, որ մայրաքաղաքի մոտ գտնվող հողային կալվածներն ավելի մեծ արժեք ունեն մյուսների համեմատ, որովհետև նավահանգիստ ունեն և լավ ճանապարհներ, դրանց բերքը դյուրին է սպառողին հասցնելը: Երուսաղեմի վերոհիշյալ հողային կալվածքն այդպիսի ագարակ է, սակայն այն մեծ բերք չի տալիս, քանի որ նրա մշակումը կատարվում է նախնադարյան եղանակով՝ «Նոյ նահապետին արոր և խոփով»: Խրիմյանն առաջարկում է երկրագործության զարգացման հետևյալ ուղին. «Ինչպես ամեն լույս Եվրոպայեն կընդունենք, պետք է մշակութեան արուեստին գաղափարն ևս անկե փոխ առնումք և այս է միակ միջոցը, այսինքն՝ պետք է փութաք, աճապարեք երկու հատ հասակավոր աշակերտներ ղրկել ի Գերմանիա. մեկն հատկապես երկրագործութեան արուեստ սորվելու համար, մյուսն՝ մանկավարժութեան. մեկն՝ հացի առատութեան, մյուսն՝ մտաց բարգավաճման: Այս երկու պետք Երուսաղեմի համար հոգի և մարմին են»[6]: Նախապես զգալով Երուսաղեմի պատրիարքի առարկությունները՝ այդ առաջարկություններն իրականացնելու նյութական դժվարությունների մասին, Խրիմյանը մանրամասն հաշիվ է կազմում, թե հինգ տարվա ընթացքում երկու ուսանող Գերմանիայում ուսանելու համար ինչքան ծախս կպահանջվի և համեմատում նրանց տված օգուտի հետ: Ազգի լուսավորության և երկրագործության զարգացման համար նա առաջարկում է դիմել նույնիսկ արտակարգ միջոցների՝ վաճառել Սբ. Հակոբյանց տաճարի ոսկին ու արծաթը և ձեռնարկել այդ գործի կատարումը: Խրիմյանը տեղեկացնում է Երուսաղեմի պատրիարքին, որ իր նախաձեռնությամբ Ազգային վարչությունը ծրագրել է Հայաստանի ամեն մի գավառից մեկ ընդունակ աշակերտ ուղարկել Գերմանիա՝ մանկավարժություն և երկրագործություն ուսանելու: «Հայոց ազգի ներկան ու ապագան բարվոքելու համար ամենեն օգտակար և զորավոր միջոցն է այս»[7],– փաստում է Կ. Պոլսի պատրիարքը՝ ընդգծելով այն մեծ դերը, որ կարող է կատարել ազգի համար լուսավորության և երկրագործության բարձր մակարդակը: 1873 թ. Խրիմյանը հրաժարվում է Կ. Պոլսի պատրիարքի

[6] *Նույն տեղում, էջ 30:*
[7] *Նույն տեղում, էջ 31:*

պաշտոնից, սակայն չի խզում իր հարաբերությունները Երուսաղեմի վանքի միաբաններից:

1885 թ. Բ. Դուռը Վասպուրականի հոգևոր առաջնորդ Մ. Խրիմյանին՝ իբրև «անհանգիստ» հոգևորականի, հրավիրում է Կ. Պոլիս՝ իր հսկողության տակ ունենալու համար: Օսմանյան մայրաքաղաքում նա չի դադարում ազգօգուտ գործեր կատարելուց. ընտրվում է Ազգային Ընդհանուր ժողովի կրոնական ժողովի ատենապետ, իսկ 1886 թ. բացարձակ քվեով ընտրվում է Ազգային ժողովի երեսփոխան, ապա՝ եկեղեցական համագումար-ժողովի ատենապետ:

1890 թ. հուլիսի 15-ի Գում-Գափուի ցույցը պատճառ դարձավ պատրիարք Խորեն Աշըգյանի հրաժարականին: Մթնոլորտը Կ. Պոլսում խիստ շիկանում է: Այդ պատճառով համագումար-ժողովը զեկուցագիր-բողոք է ներկայացնում Բ. Դռանը, բողոքում կայսերական կառավարությանը հայկական գավառներում հայ հոգևոր առաջնորդներին և թուրք պաշտոնյաներին ոչ համաչափ վերաբերմունք ցուցաբերելու համար, մինչդեռ երկուսն էլ պաշտոնավարում են նույն հրովարտակներով: Համագումար-ժողովը բողոքում է, որ Բ. Դուռն արգելում է սուրբ գրքերի ընթերցումը եկեղեցիներում, երկրում արգելվում են հայոց պատմության և քրիստոնեական հավատի վերաբերյալ գրքերը, արգելվում են օգտագործել «Հայաստան և Հայաստանեայց եկեղեցի» բառերը[8]: Բողոքագրում նշված էր. «Հայաստանի վարչական, դատական և ոստիկանական, ինչպես և տրոց բաշխման մեջ հայոց ազգը զրկված է վայելելե կենաց, ընչից և պատվո ապահովութիւն և անդորրութիւն»[9]: Համագումար-ժողովի բարձրաստիճան ինը հոգևորականներից այս փաստաթուղթը կազմեցին և ստորագրեցին միայն չորսը՝ Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրվանձտյանցը, Գրիգորիս Ալեաթճյանը և Մատթեոս Իզմիրլյանը: Չորսն էլ այդ հանդգնության համար պատժվեցին և առաջինը՝ Խրիմյանը, որին ուխտագնացության անվան տակ ստիպեցին մեկնել Երուսաղեմ: Դա, փաստորեն, կրկնակի աքսոր էր: 1890 թ. դեկտեմբերից «Արծիվ» Խրիմյանը փակվեց Երուսաղեմում «ճնճղուկի վանդակի» մեջ: Սբ. Հակոբյանց վանքի վանախցում նա գտնվում էր թուրքամետ պատրիարք Հարություն Վեհապետյանի աչալուրջ հսկողության տակ: Սակայն այդտեղ էլ աքսորական Խրիմյանը հանգիստ չի նստում: Նրա հետ նամակագրական կապ են պահպանում արևելահայ և արևմտահայ հասարակական գործիչներ: Նա քաջատեղյակ էր երկրում կատարվող իրադարձություններին, զբաղվում էր նաև գրական գործունեությամբ: Տեղի տպարանում նա վերահրատարակեց «Հրաւիրակ Երկրին Աւետեացը», բացատրելով, որ առաջին հրատարակությունն ամբողջովին սպառվել է: Մինչև երկրորդ անգամ հրատարակելը հեղինակը կատարեց մեծ աշխատանք. իր իսկ արտահայտությամբ, փոփոխություններ մտցրեց, բարձրացրեց և՛ լեզվական, և՛ գրական-իմաստասիրական հոգևոր մակարդակը: Առանձին հոդվածի նյութ կարող է լինել երկու հրատարակությունների համեմատությունը, սակայն դա կլինի գրականագիտական

---

[8] *Տե՛ս Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Մ. Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 337:*

[9] *Ատենագրութիւնք Ազգային ժողովո, 1890–1894, էջ 74:*

ու լեզվաբանական աշխատանք և չի մտնում մեր առջև դրված խնդիրների մեջ: Երուսաղեմում նա ձեռնամուխ եղավ մի այլ աշխատանքի ևս: Աքսորական և աստանդական Խրիմյանը, տոչորվելով հայրենի Վասպուրականի կարոտից, իրեն կերպավորեց Արճակում ծնված շինական Պապիկի մեջ և կյանքի դպրոցում իր տեսածն ու լսածը, իր սովորածն ավանդեց թոռնիկներին՝ հայ երիտասարդներին. «Ով Վասպուրական երկիր, իմ անձկալի հայրենիք, Պապիկ և Թոռնիկ հատկապես ձեզ համար գրեցի Երուսաղեմի Սիոնի լեռան վրա, խաչի հովանեաց տակ, դու կարդալով կտեսնաս, որ Պապիկ Թոռնիկի նյութերը Վասպուրական երկրի շինական ժողովրդի ծաղիկներեն քաղած եմ, զոր փնջիկ կապելով և ահա ձերն՝ ձեզ կնվիրեմ»[10] («Պապիկ և Թոռնիկը» լույս տեսավ Էջմիածնում 1894 թ.):

Գրական գործունեությունը չէր բավարարում աքսորական գործչի հոգեկան պահանջները: Հասարակական գործիչները ելք էին որոնում՝ նրան աքսորից ազատելու համար: Դա հեշտ չէր: Հնչակյան կուսակցությունը Ռուբեն Խանազատին ուղարկեց Երուսաղեմ, որպեսզի կազմակերպի Խրիմյանի փախուստը[11]: Այնքան մեծ էր նրա անվան հմայքը, վայելած ժողովրդականությունը, որ նրան առաջարկում էին հաստատվել եվրոպական որևէ ազատ երկրում և այնտեղից ղեկավարել հայ ազգային-ազատագրական շարժումը: Խրիմյանը հրաժարվեց արկածախնդրական այդ քայլից, մանավանդ՝ դա համարյա անհնար էր, որովհետև նա գտնվում էր խիստ հսկողության տակ. «Քրիստոսի ազատ քաղաքին մեջ ինչպես կաշկանդված եմ: Երկու անգամ լրտեսներ եկան Երուսաղեմ և երկար ժամանակ լրտեսեցին զիս»[12]:

Խրիմյանն ընդամենը 6 ամիս էր Երուսաղեմում, երբ հեռագրերը գուժեցին Ամենայն հայոց կաթողիկոս Տ. Տ. Մակար սրբազանի մահը: Խրիմյանի հոգում առկայծում է հույսի մի շող: Դեռ Մակար Թեղուտցու կաթողիկոս ընտրվելու ժամանակ նա եղել էր կաթողիկոսական ընտրելի: Այժմ ավելի մեծ էր ընտրության հավանականությունը: Էջմիածնում սկսվեց կաթողիկոսական ընտրությունները կազմակերպելու տենդագին աշխատանքը: 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հոգևոր և աշխարհիկ պատգամավորների միաձայն քվեարկությամբ՝ 72 քվեով 72-ամյա Խրիմյանն ընտրվեց կաթողիկոս Ամենայն հայոց: Սուլթան Աբդուլ Համիդը մերժեց նորընտիր կաթողիկոսին ազատել նախ՝ աքսորից, ապա՝ թուրքական հպատակությունից, որովհետև արտակարգ «սրտացավություն» էր ցուցաբերում Ռուսաստանի նկատմամբ, զգուշացնում ցարին, որ նորընտիրը քաղաքականապես անբարեհույս է և ժողովրդական խլրտումներ կառաջացնի նաև Արևելյան Հայաստանում: Միայն ռուսական ցարի խնդրանքից հետո, ընտրությունից մեկ տարի անց, սուլթանը Խրիմյանին ազատեց աքսորից և թուրքահպատակությունից, պահանջելով, որ վերջինս մեկնի իր պաշտոնատեղին, առանց ոտք դնելու թուրքական մայրաքաղաք: Երկարատև ճանապարհորդությունից հետո, ընտրությունից 17 ամիս

---

[10] *Խ ր ի մ յ ա ն Հ ա յ ր ի կ. Երկեր, Երևան, 1992, էջ 24:*

[11] *Ռ. Խ ա ն ա զ ա տ. Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908, էջ 27-28:*

[12] *ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 149, էջ 7:*

անց, 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա սուրբ խաչի տոնի օրը Խրիմյանն օծվեց կաթողիկոս Ամենայն Հայոց: Երկու տարի թափուր մնացած կաթողիկոսական նստավայրում առաջացել էին բազմաթիվ կնճռոտ հանգույցներ, որոնց լուծումն սպասվում էր նորընտիր Վեհափառից: Այնքան սերտ էին Խրիմյանի հարաբերությունները Երուսաղեմի միաբանության անդամների հետ, որ նորընտիր Հայրապետը նրանցից Մակար եպիսկոպոսին նամակով հրավիրում է Մայր Աթոռ և հաստատում Էջմիածնի տաճարի լուսարարապետի պաշտոնում: Նրա վրա է ընկնում Մայր Աթոռի սրբազան անոթների ցուցակագրումը, պահպանությունը և ըստ հարկին գործունեության ժամանակ հոգևորականների տրամադրության տակ դնելը:

Խրիմյանին մեծ չափով մտահոգում էր Երուսաղեմի վանքի մշակութային հարստությունը հայ հասարակությանը մատչելի դարձնելու գաղափարը: 1866-ից մինչև 1877 թ. Երուսաղեմի պատրիարքությունն ուներ իր պաշտոնական ամսագիրը՝ «Սիոն» հանդեսը: Հայոց հայրապետը ջանքեր էր գործադրում դադարյալ «Սիոնը» վերստին հրատարակելու համար: ԳԱԹ-ում՝ Խրիմյանի ֆոնդում, պահպանվում են մի քանի նամակներ, գրված անմիջապես հայոց Հայրապետի ձեռքով՝ ուղղված Երուսաղեմի միաբանության տարբեր անդամների: 1899 թ. մարտի 9-ի թվակիր նամակն ուղղված է Գևորգ եպիսկոպոս Երեցյանին, որը մինչ այդ եղել էր Էջմիածնում, պատվեր ստացել Հայրապետից, որ Երուսաղեմ հասնելուն պես ձեռնամուխ լինի «Սիոնի» վերահրատարակության գործին: Սակայն անցել էր բավական ժամանակ, և ամսագիրը չէր հրատարակվում: Խրիմյանը վերստին անհանգստացնում է եպիսկոպոսին՝ իր խնդիրք-պահանջով. «Ես ամենայն հույսով սպասում էի, որ առաջարկութիւն ընդունելութիւն գտնար, որ Ս. Հակոբյանց Աթոռին տակ և միաբանական եղբարց գրասիրութեան և աշխատասիրութեան փառքն էր, թողում այս մեծ հոգեկան օգուտ, որ ընծայում էր շրջակա ժողովրդին և մանավանդ Կիլիկիո մութ աշխարհին»[13]: Սակայն կաթողիկոսի հույսերը չարդարացան: Երուսաղեմի պատրիարք Հարություն Վեհապետյանը, պատճառաբանելով նյութական սուղ պայմանները, գործնական քայլեր չէր ձեռնարկում ամսագրի վերահրատարակության համար: Այս անգամ Խրիմյանը խոստանում է միանգամից վճարել 100 բաժանորդագին, իսկ առաջին թվի լույս ընծայելուց հետո՝ կրկնապատկել գումարը: Նա գիտեր, որ Ավետյաց երկիրը և Սբ. Հակոբյանց վանքի հարուստ Մատենադարանը «Սիոն»-ին կարող են մատակարարել բազմաթիվ գեղեցիկ հոդվածներ, որոնք կհետաքրքրեն ընթերցողներին: Որոշ ժամանակ անց (այս նամակը ամսաթիվ չունի) կաթողիկոսը դարձյալ գրում է Գևորգ եպիսկոպոսին, բայց, ինչպես երևում է բովանդակությունից, նա Երեցյան սրբազանը չէ: Այս նամակը ևս շոշափում է «Սիոնի» հրատարակության խնդիրները: Շատ վշտանալով, որ դադարել է հրատարակվել նաև Արմաշի վանքում լույս տեսնող «Հույս» կրոնաբարոյական և իմաստասիրական ամսագիրը, կաթողիկոսը նկատում է, որ մամուլի աշխարհիկ օրգանները, հատկապես Փարիզում հրատարակվող Արշակ Չոպանյանի «Անահիտ» ամսագիրը հարձակումներ են սկսել հայ եկեղեցականութ-

[13] *Նույն տեղում, գ. 9, նաև՝ «Էջմիածին», 1981, № Է, էջ 27:*

յան դեմ, և նրանց պատասխանում է միայն Մխիթարյան միաբանության պաշտոնական օրգան «Բազմավեպը»: Խրիմյանը կարծում է, քանի որ «Անահիտի» հարձակումներն ուղղված են Կ. Պոլսի այդ ժամանակի պատրիարք Մ. Օրմանյանի դեմ, այսինքն՝ արևմտահայ հոգևորականի դեմ, պատասխանողները և պաշտպանողները ևս պետք է լինեն արևմտահայերը: Մխիթարյան միաբանության անդամ հայր Սիմեոն Երեմյանը անպատասխան չի թողնում «Անահիտի» հարձակումները, սակայն եթե պատասխանը հնչեր Երուսաղեմից կամ Արմաշից, ավելի ճիշտ կընկալվեր այն: Այս անգամ ևս հայոց Հայրապետը դրամական օգնություն է խոստանում Երուսաղեմին, ապա հայտնում է, որ պատկառելի մի գումար, իբրև գրավ, պահել է իր մոտ, ամսագիրը լույս ընծայելուց հետո անմիջապես կուղարկի այն: Խրիմյանը վշտանում է, որովհետև «Երուսաղեմ դիւրութիւն ունի, քանի որ յուր ձեռքի տակ հարուստ մի տպարան կա: Զեռնհաս գրողները ևս պակաս չեն միաբանութեան դասեն»[14]:

Երրորդ անգամ Խրիմյանը դիմում է Երուսաղեմի միաբանության այլ անդամի՝ Մամբրե եպիսկոպոսին: Այս նամակը չնայած վերաբերում է նույն խնդրին, սակայն ոճը լրիվ տարբերվում է մյուս երկուսից: Սա կարծես դրամատիկական փոքրիկ պատկեր լինի, որի ռեժիսորը հայոց Հայրապետն է, իսկ գործող անձինք՝ Երուսաղեմի միաբանության ակնառու անդամները, նրանց թվում նաև պատրիարք Հարություն Վեհապետյանը: Նամակում արտահայտված է նաև ալեզարդ Հայրապետի գրական անուրանալի ձիրքն ու նուրբ հումորը: Նամակում Վեհափառը հրահանգում է Մամբրե սրբազանին իր խոսքին բնաբան դնել. «Վասն «Սիոնի» ոչ լռեցից և վասն Երուսաղեմի ոչ ներեցից: Այնուհետև դու շարե, փաստաբանե վասն «Սիոնի» կրկնակի հրատարակութեան: Եթե մեռեալ և թաղեալ «Սիոն» հրաման տար, որ զվեմն ի բաց առնուն, դու այն ժամ գոչյա բարձրաբարբառ. «Արի, եկ արտաքս, ով Սիոն, հերիք եղեւ քեզ ննջել ի տապանիդ անխոս, անբարբառ»[15]: Խրիմյանի սցենարի մեջ այս խոսքերին զայրացած պատասխան է տալիս Հարություն պատրիարքը, թե ինչպես է համարձակվում Երուսաղեմի նախկին աքսորականը, որին ինքը փակել էր Մակարի խուցի մեջ, իրեն առաջարկություն անել հրամանի ոճով: Հերթով խոսք են վերցնում միաբանության անդամներ Սահակ և Ներսես եպիսկոպոսները, Անդրեաս վարդապետը: Վերջինս խնդրում է պատրիարքից անպայման սկսել «Սիոնի» վերահրատարակությունը, որ միաբանության «պարապ-սարապ» անդամները գրելով զբաղվեն, ոչ թե մտածեն ուտելու և թալանելու մասին: Ըստ սցենարի, այդ ժամանակ Մամբրե եպիսկոպոսը պետք է հաներ Վեհափառի ուղարկած 500 ռուբլին՝ հանձներ պատրիարքին, որ վերջինս ստանար «Սիոնի» վերահրատարակության իրավունքը և գործը պետք է ունենար հաջող վախճան: Սակայն Խրիմյանը նամակը վերջացնում էր հուսախաբությամբ, կարծես նաև սպառնալիքով. «Վայ, Հայրիկի բախտին, որ թափեց աչքի լույս և գրեց այս նամակ յուր անչափ զբաղանաց մեջ. եթե տակավին չհաջողվի բան և դու

[14] *ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 11, նաև՝ «Էջմիածին», 1981, № Է, էջ 29:*
[15] *ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 68, նաև՝ «Էջմիածին», 1981, № Է, էջ 29:*

գիտես զքեզ և երեքին բարեկամներդ պատասխանատու կճանաչեմ»[16]: Տեղին էր նրա կանխազգացումը. «Սիոնը» չվերահրատարակվեց: Նրա երկրորդ շրջանի հրատարակությունն իրականացավ Հայրիկի մահից բավական ուշ՝ 1927 թ., Եղիշե Դուրյան պատրիարքի օրոք, խմբագրապետությամբ Բարկեն եպիսկոպոս Կյուլեսերյանի:

Վերը թվարկած փաստերն ապացուցում են հայկական Երուսաղեմի հետ Ամենայն Հայոց Հայրիկի ունեցած սերտ կապերի մասին և կարծես հուշում են մեր նվիրապետությունների հոգևոր ղեկավարներին՝ օրինակ վերցնել Հայոց Հայրիկից:

МКРТЫЧ ХРИМЯН И АРМЯНСКИЙ ИЕРУСАЛИМ

ЭММА КОСТАНДЯН

Р е з ю м е

Католикос всех армян Мкртыч Хримян в течение всей жизни был тесно связан со священными армянскими местами Иерусалима. В молодости, еще не будучи помазанным в сан священника, он посетил Иерусалим и написал поэму “Приглашение в Святую землю”, где описал самые сокровенные и святые места всех христиан. В бытность Константинопольским патриархом он поддерживал тесные связи с Иерусалимским патриархом. В конце века, уже став Католикосом всех армян, М. Хримян посоветовал Иерусалимскому патриарху возобновить издание литературно-религиозного журнала “Сион”, обещая выделить для этой цели финансы. Но эти усилия его не увенчались успехом. Издание журнала “Сион” началось только после его смерти.

[16] *ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 68, նաև «Էջմիածին», 1981, № Է, էջ 31:*